առ տէֆտէրտարն վասն փրկելոյ վարդապետին (Գաբրիէլ), և նա ասէ թէ Հարցանեմ առ վէզիրն և ապա փրկեմ։ Ի գիշերիս, որ Կիրակի լուսանայր, յանուանի սահմանս քաղաքիս մի մարդ ձգեալ՝ սպանելով գլխատեալ։

Կիրակի Ը-իս ի մօտ Գաբրիէլ վարդապետն գնացի։ Եւ երեկոյիս բացաւ օրն մինչ ի կէս գիշերս և առաւօտուս կրկին ցուրտ եղև, որպէս յառաջին օրերքն։ Վասլէն թուղթն եկ Կիրակիս, և օրս հանեցին զվարդապետն ի բանտէն։

Գշիս (10 Մարտ) վէզիրն ամենայն մեծամեծօքն զՎալիտէ խանն փակեաց և եմուտ ի ներս որոնել եթէ գտցէ ըստակ զալպ։

Դշիս (11 Մարտ) զթղթերն մօհրեցին գեղից հասկի Զատկիս, և զՈհան պարոնտիրին ևս։

Եշի օրս (12 Մարտ) զալպազան հայ մի զալաթացի կախեցին ի Պարմաղափուն։ Երեկոյիս զգեղին խապարն առաք՝ թէ մահ գոյ։ Եւ աւուրքս զՍտեփանոսն ուղարկեցին յԵրուսաղէմ։

Զշի (13 Մարտ) մեր գրացի Փափազօղլին մեռաւ։

Կիրակի (15 Մարտ)։

Բշի (16 Մարտ) կրկին Հոռոմքն մտեալ ի վէզիրն վասն Երուսաղէմայ թէ Ահա՛ Հայք գնացեալ անդ՝ առեալ են. և կրկին վէզիրն հրամայէ թէ Էմր գրեսցեն թէ լիցի Հոռոմոց։

Շաբաթս (21 Մարտ) ի մէջ տիւանին յամեցին և մուշավէրէ առնէին վասն Հոռոմի թղթին. և վէզիրն մտեալ ի թագաւորն թախլիս առնել, եւ թագաւորն մեծաւ սաստմամբ ասէ թէ Ազգաւ ջնջեսցի։ Եւ յետ տիւանին վէզիրն ձայնեալ զպատրիգն Հոռոմոց քաղաքին, և հարցեալ ընդ նա թէ Կնիքս քո՞յ է. և նա ասացեալ թէ Իմ է. և ապա բացեալ զթուղթն թէ Այս ի՞նչ խայինութիւն է զոր առեալ ես։ Քանզի սա